Հավելված
*Հաստատված է*
*ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2009թ.փետրվարի 26-ի թիվ 12-Ա որոշմամբ*

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 1 | Դիտորդների հավատարմագրումն իրականացվում է<br>*ընտրություն նշանակելուց հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ* | 29, կետ 2 | մինչև 2009թ. մայիսի 21-ը | ԿԸՀ |
| 2 | Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են<br><br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 75 և ոչ ուշ, քան 70 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն* | 138.5, կետ 3 | 2009թ. մարտի 17-ից 22-ը՝ մինչև ժամը 18:00-ն | Լիազոր ներկայացուցիչներ |
| 3 | Նախընտրական հիմնադրամի ձևավորումը<br><br>*առաջադրման փաստը հավաստող տեղեկանքը ստանալու օրվանից* | 25 և 138.16 | 2009թ. մարտի 17-ից | Առաջադրված կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 4 | Ընտրական տեղամասերը և տեղամասային կենտրոնները կազմավորվում են<br><br>*քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ* | 15, կետ 2 և 17, կետ 1 | մինչև 2009թ.ապրիլի 16-ը | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում, համայնքի ղեկավար, ԸԸՀ |
| 5 | Ընտրական տեղամասերը համարակալվում, տեղամասային կենտրոնները հաստատվում և այդ տվյալները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են | 42, կետ 1 ենթակետ 3, 4 | Հաստատելուց հետո երկօրյա ժամկետում | ԸԸՀ |
| 6 | Տեղամասային կենտրոնի կազմավորման մասին քաղաքացիները և տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարը համայնքի ղեկավարի կողմից հայտարարությունների միջոցով տեղեկացվում են<br>*տեղամասային կենտրոնի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում.* | 17, կետ 3, ԿԸՀ 22.06.2005թ. թիվ 15-Ն որոշում | մինչև 2009թ.ապրիլի 18-ը | Համայնքի ղեկավար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնում փակցվում են<br><br>*քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ* | 12, կետ 1 և<br><br>13, կետ 4 | 2009թ.<br>ապրիլի 21-ին | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար, տեղ. կենտրոնի տարածքը տնօրինող հաստ. ղեկավար |
| 8 | Քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանակի մասին ընտրողները ծանուցվում են<br><br>*քվեարկության օրվանից մինչև 3 օր առաջ* | 13, կետ 8 | մինչև 2009թ.մայիսի 28-ը | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում |
| 9 | Ընտրողների ցուցակներն էլեկտրոնային կրիչով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են<br><br>*քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ* | 12, կետ 2[1] | 2009թ.<br>ապրիլի 21-ին | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 10 | *Կետը ուժը կորցրած է ճանաչվել 11.05.2009թ. ՀՀ ԿԸՀ թիվ 36-Ա որոշմամբ* | | | |
| 11 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը կատարվում է<br><br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35 և ոչ ուշ, քան 30 օր առաջ` մինչև ժամը 18:00-ն* | 138.5, կետ 5 | 2009թ.<br>ապրիլի 26-ից մայիսի 1-ը` մինչև ժամը 18:00-ն | ԿԸՀ |
| 12 | Նախընտրական քարոզչությունն իրականացվում է<br><br>*թեկնածուների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը, ավարտվում` քվեարկությունից մեկ օր առաջ* | 18, կետ 5 և<br><br>138.15 | 2009թ.<br>մայիսի 2-ից 29-ը` ժամը 24:00 | ՀՀ քաղաքացիներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 13 | Քարոզչական պաստառ փակցնելու համար համայնքի տարածքում հատուկ տեղեր առանձնացվում են<br><br>*ոչ ուշ, քան նախընտրական քարոզչությունն սկսվելուց 5 օր հետո* | 21, կետ 2 | Ոչ ուշ, քան մինչև 2009թ. մայիսի 7-ը | Համայնքի ղեկավար |
| 14 | Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են<br><br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 26 և ոչ ուշ, քան 23 օր առաջ` մինչև ժամը 18:00-ն* | 37, կետ 2 | 2009թ.<br>մայիսի 5-ից 8-ը` մինչև ժամը 18:00-ն | ԸԸՀ |
| 15 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերն անցկացվում են<br>*հանձնաժողովի կազմավորման հաջորդ օրը` ժամը 12:00-ին* | 37, կետ 4 | 2009թ. մայիսի 9-ին` ժամը 12:00-ին | ԸԸՀ |
| 16 | Ինքնաբացարկի մասին դիմում կարող է ներկայացվել<br><br>*քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ* | 138.14,<br>կետ 3 | մինչև 2009թ.մայիսի 21-ը | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 17 | Քվեաթերթիկները թողարկվում են<br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9 և ոչ ուշ, քան 3 օր առաջ* | 49[1], կետ 8 | 2009թ.<br>մայիսի 22-ից 28-ը | ԿԸՀ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 18 | Թեկնածուների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է<br><br>*քվեարկության օրվան նախորդող 7 օրվա ընթացքում (ներառյալ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20:00-ն)* | 22, կետ 3 | 2009թ. մայիսի 23-ին ժամը 24:00-ից սկսած մինչև քվեարկության օրը՝ ժամը 20:00-ն | ԶԼՄ-ներ, քաղաքացիներ, կազմակերպություններ |
| 19 | Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, քաղաքացու կողմից ընտրողների ցուցակում ընդգրկվելու կամ ընտրողների ցուցակից դուրս գալու մասին դիմում ներկայացվում է.<br>համայնքի ղեկավարին<br>*քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ*<br><br>լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում<br>*քվեարկության օրվանից մինչև 5 օր առաջ* | 14, կետ 1 | մինչև 2009թ.մայիսի 24-ը<br><br>մինչև 2009թ.մայիսի 26-ը | Համայնքի ղեկավար,<br><br>լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 20 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հանձնվում են<br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 3 օր առաջ* | $49^2$, կետ 4 | 2009թ. մայիսի 26-ից 28-ը | ԿԸՀ |
| 21 | Ընտրողների ցուցակներն էլեկտրոնային կրիչով համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են<br><br>*քվեարկության օրվանից 2 օր առաջ* | 12, կետ $2^1$ | 2009թ.մայիսի 29-ին | Լիազոր մարմին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 22 | Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ տեղամասերի և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, տպագրված 2 օրինակից (ընտրողների ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են<br>*քվեարկության օրվանից 2 օր առաջ* | 12, կետ 2 | 2009թ.մայիսի 29-ին | Լիազոր մարմին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 23 | Ընտրողների ցուցակի վերջնական օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է<br>*քվեարկության օրվանից 2 օր առաջ* | 13, կետ 6 | 2009թ.մայիսի 29-ին | ՏԸՀ նախագահ |
| 24 | Քվեարկության սենյակը կահավորվում է<br><br>*քվեարկությունն սկսվելուց առնվազն 24 ժամ առաջ* | 16, կետ 2 և 47, կետ 3 | մինչև 2009թ.մայիսի 30-ը՝ ժամը 08:00-ն | Համայնքի ղեկավար,<br><br>ՏԸՀ |
| 25 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները և կնիքների փաթեթները հանձնվում են<br>*քվեարկության նախորդ օրը* | $49^1$, կետեր 9 , 11 և $49^2$, կետ 5 | 2009թ. մայիսի 30-ին | ԸԸՀ |
| 26 | Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները, ընտրողների ցուցակների էջերը ստորագրվում են<br>*քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն* | 53, կետ 1 | 2009թ. մայիսի 30-ին՝ մինչև ժամը 24:00-ն | ՏԸՀ |
| 27 | Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է | 53, կետ 2 | 2009թ. մայիսի 31-ին՝ ժամը 07:00-ին | ՏԸՀ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28 | Քվեարկությունը | 46 | 2009թ.<br>մայիսի 31-ին՝ ժամը<br>08:00 - 20:00 | ՏԸՀ |
| 29 | Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է<br>*քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 10 ժամվա ընթացքում* | 61, կետ 6 | 2009թ.հունիսի 1-ին՝<br>մինչև ժամը 06:00-ն | ՏԸՀ նախագահ |
| 30 | Փաթեթավորված և պարկի մեջ դրված ընտրական փաստաթղթերը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակը, քվեարկության մասնակիցների վերաբերյալ արձանագրությունը, գործավարության մատյանը, կնիքը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, քվեատուփը և քվեարկության խցիկները ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են<br>*քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում* | 61, կետ 9,<br>ԿԸՀ 22.06.05թ.<br>թիվ 20-Ն<br>որոշում | 2009թ.հունիսի 1-ին՝<br>մինչև ժամը 08:00-ն | ՏԸՀ նախագահ և քարտուղար |
| 31 | Ընտրությունների նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրվում են<br>*քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում* | $63^{2}$, կետ 1 | 2009թ.հունիսի 1-ին՝<br>մինչև ժամը 20:00-ն | ԿԸՀ |
| 32 | Վերահաշվարկի պահանջի մասին դիմումներն ընդունվում են<br>*քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14:00-ն* | $40^{2}$, կետ 7 | 2009թ.հունիսի 1-ին՝<br>մինչև ժամը 14:00-ն | ԸԸՀ |
| 33 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են<br>*քվեարկության ավարտից առնվազն 24 ժամ հետո* | 63, կետ 3 | 2009թ.հունիսի 1-ին՝<br>մինչև ժամը 20:00-ն | ԸԸՀ |
| 34 | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վերահաշվարկի աշխատանքներն իրականացվում են<br>*քվեարկության օրվանից 2 օր հետո՝ ժամը 9:00-ից մինչև քվեարկության օրվանից 5 օր հետո՝ ժամը 14:00-ն* | $40^{2}$, կետեր<br>7 և 12 | 2009թ.հունիսի 2-ին՝<br>ժամը 09:00-ից<br>մինչև հունիսի 5-ը՝<br>ժամը 14:00-ն | ԸԸՀ |
| 35 | Ընտրությունների արդյունքներն ամփոփվում են<br>*քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր հետո* | $63^{2}$ և<br>138.18 | մինչև<br>2009թ.հունիսի 7-ը | ԿԸՀ |